ԿԱՐԾԻՔ

Անի Դավիթի Շիրինյանի «Դիցաբանական և աստվածաշնչյան մոտիվները Չարենցի ստեղծագործություններում» թեկնածուական ատենախոսության մասին:

Գրականության և արվեստի զարգացման շղթայում ժամանակները վերջիններիս համակարգի մեջ մտնող տեսական հարցադրումների նկատմամբ խստրականություն չեն դրսևորում: Ամեն գրական երկ իր ներքին հնարավորությունների սահմաններում միշտ էլ մեկնաբանելի է յուրովի, և դա ոչ միայն թեմատիկ, բովանդակային, այլև համարժեք գեղարվեստական միջոցների, լայն առումով՝ բանարվեստի կիրառման պլանով: Այս պարագայում կարևոր գործոնը հիշյալ պահանջները իրականացնող օժտված հեղինակի ներկայությունն է, ինչը հավասարապես տարածվում է նաև այդ արժեքները ուսումնասիրող մասնագետի վրա, որը տվյալ դեպքում ատենախոս Անի Շիրինյանն է: Նա Չարենցի ստեղծագործությունը փորձել է դիտել արևմտյան տեսական մտքի համատեքստում՝ գիտական խնդիրը քննելով բանիմացորեն, գրական երևույթները բացահայտելու ջանասիրությամբ:

Չարենցի ստեղծագործական կյանքն այնքան բեղուն ու բազմախորհուրդ է եղել, որ ժամանակակից տեսական մտքի առիթով նոր մեկնաբանությունների առիթ է ընձեռում անընդհատ: Ուստի թեմայի դրված խնդրադրումը՝ «Դիցաբանական և աստվածաշնչյան մոտիվները Չարենցի ստեղծագործություններում», խիստ արդիական է և գիտական նոր վերլուծություններ է ենթադրում:

Թերևս կարևոր են ուսումնասիրվող հեղինակի օժտվածությունը, ժամանակի շունչը զգալու կարողությունը, մշակութային բազմաշերտությունը, ինչը համեմատաբար հնարավորություն է ընձեռում ուսումնասիրողին մասնավոր հարցադրման մեջ տարածական դիտանկյուն ունենալու և խնդիրը բազմակողմանիորեն քննելու համար: Ուստի, ինչպես իրավացիորեն նկատում է Շիրինյանը՝ «Ինչքան ժամանակը հեռացնում է մեզանից Չարենցի ապրած ու ստեղծագործական տարիները, այնքան աճում է հետաքրքրությունը մեծ գրողի նկատմամբ» և այսօր էլ հայ գրականագիտությունը հարաբերական իմաստով

որոշակի քայլեր է անում՝ հետևելով արևմտյան տեսական-փիլիսոփայական մտքին, փորձում է ստեղծագործաբար մոտենալ Չարենցի ստեղծագործության գնահատման հարցերին: Կուզեի նշել, որ այս խնդրում իր կարևոր նպաստն է բերում գրականագետ Սեյրան Գրիգորյանը, ինչպեսև կարևոր է ստեպ-ստեպ կազմակերպվող «Չարենցյան ընթերցումներ» գիտաժողովը, որի զեկուցումները լույս են տեսնում նաև առանձին գրքով:

Իսկ հիմա ներկայացնենք Անի Շիրինյանի աշխատանքի երեք գլուխների անվանումները՝ «Չարենցի գեղագիտական և փիլիսոփայական աշխարհայացքի ձևավորումը. Ժամանակի ազդակները», «Դիցաբանական մոտիվները Չարենցի գեղարվեստական համակարգում. Նրա ստեղծագործական կրոնական և փիլիսոփայական ըմբռնումները», «Ազգային ու համամարդկային գեղարվեստական ավանդների համադրությունը գրողի երկերում. Չարենցը՝ նորարար», որոնց լուծմունքները հենվում են մասնավոր հարցադրումների վրա: Չարենցի աշխարհայացքի ձևավորմանը վերաբերող առաջին գլխի անդրադարձներում, երիտասարդ գրականագետը ճիշտ է նկատում, որ «Չարենցի միտքն ու բանականությունը ռեալ կյանքի ցավից ինքնաբերաբար փախչում են դեպի հոգու խորխորատներ, ուր երազանքների, անուրջների հրաշալի տարածք կա»: Այս գլխում ներկայացվում են բանաստեղծի խորհրդապաշտական հայացքները, Չարենցի առնչությունները հեթանոսական շարժմանը և աթեիզմի դրսևորումներին: Այս շրջանակներում Շիրինյանի բնութագրումները, սահմանումները միանգամայն ճիշտ են և կիրառվում են համաշխարհային գրականագիտական մտքի մեջ: Բայց ահա լավ կլիներ, որ խորհրդապաշտությունը հատկապես դիտարկվեր աստվածաշնչյան և դիցաբանական խորհրդանիշերի ու նշանների բացահայտման ու վերլուծության ծիրում:

Սկզբում նկատեցի, որ Անի Շիրինյանը Չարենցի ստեղծագործությունը դիտարկել է արևմտյան տեսական մտքի համատեքստում, որն անշուշտ խրախուսելի է: Հայցորդի այս մոտեցումից ելնելով կուզեի խոսել մեթոդաբանության մասին, որն այսօր խիստ կարևոր է գիտական ուսումնասիրություններում: Ատենախոսը նշում է համադրման-հակադրման մեթոդների, ինչպեսև՝ պատմահամեմատական մեթոդը:

Ատենախոսը մոռանում է ծիսական-միֆոլոգիական մեթոդի մասին, որով սակայն հաճախ է առաջնորդվում իր ուսումնասիրության մեջ:

Բացի այդ, իր ուսումնասիրության մեծ առկա ենթագլուխները ատենախոսը ձևակերպում է ենթակետ եզրույթով, որը, կարծում եմ, ավելի է նեղացնում արված ծավալուն աշխատանքը: Դրանք մասնավոր հարցադրումներ են, ենթաբաժիններ կամ ենթագլուխներ:

Բավականին հետաքրքրական է Չարենցի և հեթանոսական շարժման կապը ներկայացնող ենթաբաժինը: Խոսելով հեթանոսական շարժման գրականության պոետիկայի մասին ատենախոսը մի շարք ուշագրավ համեմատություններ է անում Չարենցի և հայ մյուս գրողների երկերում և հետաքրքիր հետևություններ անում. «Հիմա՝ սիմվոլի՞ստ, թե՞ հեթանոս: Չարենցի պարագայում սա ոչ երկվություն, ոչ էլ հակադրություն է. դիցաբանությունը ձևավորվել է այն ժամանակ, երբ դեռ մարդկային գիտակցությունը նույնացնում էր իրականն ու իդեալականը: Չարենցի երկերում կան և՛ հեթանոսական, և՛ խորհրդապաշտական պատկերներ: Գիտենք, որ նա պայքարում էր հնի ու հնացածի դեմ: Բայց ինչու՞ է նորարարության այս ջատագովը դիմում հին աստվածներին: Պարզվում է, որ Չարենցը դեմ էր հնացածին, բայց ոչ՝ հնուց եկող հավերժականին» (էջ 28):

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը քննության է առնում Չաներցի հեթանոսական պանթեոնը և զուգահեռ քննում դիցաբանական ու աստվածաշնչյան որոշ մոտիվները բանաստեղծի բնագրում: Բավականին ուշագրավ քննվում են հայ և համաշխարհային դիցարանի կերպարների ներկայությունը Չարենցի ստեղծագործություններում և մեկնաբանվում դրանց ենթատեքստերը: Ընդհանուր առմամբ, պետք է փաստել, որ այս գլուխը աշխատանքի ամենաարժեքավոր հատվածն է: Լավ կլիներ, եթե նշվեր, թե դիցաբանական և աստվածաշնչյան մոտիվները ինչ կառուցվածքային նշանակություն ունեն բնագրում, քանզի մշտապես փոխհարաբերվում են միմյանց հետ՝ ապահովելով գրական երկի կենդանի օրգանիզմը:

Աշխատանքը եզրափակող գլխում առաջադրված հարցադրումների լուծմունքները ներկայացվում է դիպուկ եզրահանգումներով բանիմացությամբ, գրողի սուրբգրային ակունքները խորքից բացելու կարողությամբ՝ չշրջանցելով հայ և

համաշխարհային տեսաբանների կարծիքները, հիմնավորումները: Անդրադառնում է մահվան տեսիլների քրիստոնեական գաղափարաբանությանը և փորձում հայտնաբերել «Գիրք ճանապարհիի» արմատները:

Միայն թե շատ կուզեի, որ ատենախոսը ուշադրություն դարձներ նաև մի շարք գրականագետների՝ Ս. Աբրահամյան, Ա. Բեքմեզյան, Ա. Նիկողոսյան, Հ. Համբարձումյան և այլն ուսումնասիրություններին, որոնք հարուստ տեսական նյութ կտային պոեզիայի և միֆականության մասին: Այս անունները ես նշում եմ իբրև ի գիտություն, հասկանալով, որ թեկնածուական աշխատանքի ընդունված ծավալը հնարավորություն չի տալիս մանրամասն անդրադառնալ տեսապատմական բնույթ ունեցող բոլոր այն աշխատություններին, որոնք այսօր գործառվում են ժամանակակից գրականագիտության մեջ: Բայց այն տարողունակ աշխատանքը, ինչպիսի հաջողությամբ իրականացրել է Անի Շիրինյանը, նրան միանգամայն իրավունք է տալիս արժանանալու իր հայցած գիտական աստիճանին: Հանձին Անի Շիրինյանի մենք ունենք չարենցագիտության մի լավ մասնագետ, տեսական հարուստ ըմբռնումներով, որի կարիքը այսօր խիստ զգալի է: Համոզված եմ, որ նա կշարունակի իր մասնագիտական հնարավորությունները, բազում խնդիրներ առաջադրող Չարենցի բնագրի ուսումնասիրության ասպարեզում: Խորհուրդ կտայի նաև, որ նա այս ամենին զուգահեռ զբաղվի նաև ժամանակակից գրականության քննադատությամբ, մամուլի էջերից դուրս մղի այն անկոչ ու ինքնուս հոդվածագրերին, որոնք բացարձակապես պատկերացում չունեն գրականագիտության և տեսության մասին, ովքեր զբաղված են գրականությունը ներկայացնել էմոցիոնալ զեղումներով անձնավորված գնահատականներով:

Ընդդիմախոսս միջնորդում է գիտական աստիճաններ շնորհող խորհրդի հարգարժան անդամների առջև Անի Շիրինյանին շնորհել իր հայցած գիտական աստիճանը, որին նա միանգամայն արժանի է:

Արմեն Ավանեսի Ավանեսյան
բանասիրական գիտությունների թեկնածու